

բայք և լաւ են քան Բագրեւանդայ, Անդաբայ և Ապահունեաց դաշտերն:

Արածանւոյ աջ կողմն գտնուած մասն կը տարածուի յարեւմուտս ի Խնուս, հիւսիս մինչև Տուարածատափ ի հարաւ մինչև Ապահունեաց արեւմտեան մասն. իսկ ձախ կողմն ևս ուր կայ բերդաքաղաքն, կը տարածուի ի հիւսիս յարեւելս Բաղնոց, յարեւելս Արձէշ, ի հարաւ Ապահունեաց արեւելեան մասն:

Քրդութիւնը այս տեղ զօրաւոր է. կը բնակին մեծաւ մասամբ Հասնանցի կոչուած մեծ ցեղն, որ 230 գիւղէ կը բաղկանան, որք երկու բաժանում ունին. բուն Հասնանցիք որք Մանազկերտի շուրջն կը բնակին և կան 100 գիւղ և Պարագցիք որ Մանազկերտի ի հիւսիս արեւմուտս Ալաշկերտի Խնուսայ և Անդաբի միջավայրն բարձրացած լեռներու մէջ կը բնակին, որք ըստ ոմանց հայկական ծագում ունին և նման Հայոց հայկական ուխտավայրերն և միշտ ուխտի կը գնան Աարդավառին, Համբարձման և ըն:

Մանազկերտէ յետոյ ի հարաւ կը տարածուի վերին և ապա ներքին Բուլանխ (Ապահունիս) գաւառներն, ուր հայ տարրն բազմաբնակ է:

Արածանի Մանազկերտի և Ապահունեաց գաւառներն, որպէս ասացինք, երկու բաժանած՝ մեծ մասերն ի ձախ թողած է, ուր են բազմաբնակ գիւղերն և կառավարութեանց կեդրոններն:

Աշակերտէն յԱպահունիս գնալու համար որպէս զիտենք, անցնելու ենք Ուլիճ կետուկէն, յետոյ Խանք, Տէրք, Տատկան, Էլաբեր և փոքր Ղարղալխ, ուստի Արածանին անցնելով մեծ Ղարղալխ, որ ըստ իս ծաղկոտն գաւառի կը պատկանի: Այս տեղ ևս կը միանայ Գարա-